«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Դժվար» երեխան և իր հիմնախնդիրները
ԱՌԱՐԿԱ	Անգլերեն
ՀԵՂԻՆԱԿ	Լիլիթ Վարդանյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Լեռնանիստի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. «Դժվար» երեխայի հոգեբանական բնութագիրը 6

Գլուխ 2. «Դժվար» երեխաների վարքագծի նախադրյալների ձևավորման և զարգացման յուրահատկությունները 13

Եզրակացություն 18

Գրականության ցանկ 20

Գիտահետոզատական մաս----------21

Ներածություն

Մեր օրերում «դժվար» երեխաների հիմնախնդիրը արդիական և հրատապ դարձած այն խնդիրներից է, որը շատ մտորումների տեղիք է տալիս: Այդ է տվյալ թեմային անդրադառնալու, դրա խորքային հիմնախնդիրները բացահայտելու հիմնական պատճառը: Անհրաժեշտ է պարզել, թե ովքեր են արդյոք պատասխանատվություն կրում այս երեխաների ճակատագրի համար:

Վարքի շեղումը՝ դեվիանտ վարքը (լատ.Deviato_շեղում), միշտ կապված է մարդկանց գործունեության տեսակների, գործողությունների, որոշ արարքների և հասարակության մեջ, սոցիալական խմբում, կազմակերպությունում ընդունված նորմերի միջև անհամապատասխանության հետ:

Այսօր մեր հասրակության մեջ օրախնդիր հարց է դարձել «դժվար» երեխաների հետ տարվող աշխատանքները:

Մանուկ հասակում ձևավորված եսասիրությունը, ստախոսությունը, կոպտությունը, ծուլությունը կարող են հանգեցնել զանազան հոգեբանական անոմալիաների, որոնք ուղղակիորեն կապված են շեղվող վարքի տարբեր ձևերի հետ: Վարքում ամենամեծ շեղում դիտվում է դեռահասության տարիքում՝ մանկությունից հասուն վիճակի անցման, նոր սոցիալական դիրքերի ձեռքբերման, իր նկատմամաբ որպես հասարակության անդամի գիտակցման վերաբերմունքի ձևավորման պայմաններում:

Մասնագիտական գրականության մեջ շեղվող վարքով երեխաներին անվանում են «դժվար» երեխաներ: Նրանց թիվը գնալով ավելանում է մեր հասարակության մեջ՝ կազմելով երեխաների 20%-ը: Հիմնահարցն *արդիական է* ինչպես մեր, այնպես էլ այլ երկրներում՝ պայմանավորված մանկական հանցագործությունների և անապաստան երեխաների թվաքանակի կտրուկ աճով, հատկապես այն երեխաների, որոնք զրկված են ծնողական հոգատարությունից և ընտանիքից:

Հետազոտության օբյեկտն է «դժվար» երեխային ուղղված մանկավարժական ներգործությունները՝ պայմանավորված նոր տնտեսական հարաբերություններով, այլ ներգործության հոգեբանամանկավարժական վերլուծությամբ:

Հետազոտության առարկան է «դժվար» երախայի վարքագծի և դրսևորման ներքին մեխանիզմների և պատճառների ուսումնասիրությունը՝ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի անբարենպաստ ներգործությունների նոր տնտեսական հարաբերությունների պայմաններով:

Գիտական վարկած: Աշխատանքի ընթացքում մենք առաջնորդվում ենք հետևյալ վարքագծով.

«Դժվար» երախաների վարքագծի պատճառները բազմազան են՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ, որում մենք առավել շեշտադրում ենք անբարենպաստ ընտանիքը, մանկավարժական բարձիթողությունը:

Մանկավարժահոգեբանական ներգործությունները պետք է ուղղված լինեն ոչ միայն երեխային, այլ նաև երեխաների ընտանիքին, ծնողներին կամ նրանց խնամող մեծահասակներին:

Հետազոտման հիմնական ***նպատակն է*** բացահայտել նոր տնտեսական հարաբերությունների պայմաններում «դժվար» երեխաների վարքի պատճառականությունը, ցույց տալ հանրապետությունում «դժվար» երեխաների շարժընթացի հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները և հաղթահարման ուղիները:

Հետազոտության հիմնական նպատակը կոնկրետացել է հետևյալ ***խնդիրներում.***

1. Կատարվող հիմնախնդրի տեսական հիմքերի վերլուծություն և հոգեբանամանկավարժական վերլուծության ենթարկել «դժվար» երեխայի հիմնախնդրին վերաբերող հայեցակետերը ու մոտեցումները:

2. Ներկայացնել «դժվար» երեխաների բնութագիրը, տալ նրանց հոգեբանական պատկերը:

3. Բացահայտել, դասակարգել և բնութագրել «դժվար» երեխաների վարքագիծը, ծնողի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները:

4. Ներկայացնել և վերլուծել դեռահասների «շեղվող» վարքագծի կանխման ուղիներն ու հոգեբանամանկավարժական ներգործությունների մեխանիզմները:

5. Կատարել երեխաների վարքի շեղումների կանխման և շտկման առնչությամբ փորձարարական աշխատանքներ:

6. Մշակել մեթոդական ցուցումներ և առաջարկներ «շեղվող» վարքի կանխարգելման և հաղթահարման ուղղությամբ:

Գլուխ 1. «Դժվար» երեխայի հոգեբանական բնութագիրը

Ի՞նչ է թաքնված մեզ բոլորիս հայտնի «դժվար» երեխա հասկացության տակ: «Դժվար» երեխա ասելով հասկանում ենք հոգեպես և ֆիզիկապես միանգամայն առողջ երեխաներին, որոնց վարքագիծը այս կամ այն պատճառով շեղվում է հասարակության մեջ ընդունված նորմերից ու արժեքներից: Մանկավարժության և հոգեբանության մեջ «դժվար» երեխա տերմինով ավանդաբար նշանակում են այն մեծաթիվ երեխաներին, որոնց անձի կառուցվածքը ուղղումների կարիք է զգում: Նրանց շարքին են դասվում նաև կամակոր և քմահաճ երեխաները, որոնք դիմադրություն են ցույց տալիս մեծերի պահանջներին ու խորհուրդներին: Բնավորության այդ գծերի զարգացումը կանխելու և հաղթահարելու հիմնական ուղին նման շեղումների պատճառների բացահայտումն է, երեխայի պահանջմունքների ու հետաքրքրությունների նկատմամբ ուշադրություն[1] հանդես բերելն է, որը պետք է զուգորդվի պահանջկոտության հետ:

Առանձնապես դժվար է դաստիարակչական աշխատանք կատարել մանկավարժական տեսակետից խորապես բարձիթողի արված երեխաների՝ օրինազանց երեխաների հետ: Այդ դեռահասների վարքն առանձնապես իմպուլսային է: Նրանց անձի կառուցվածքը հստակ չէ, ունեն ցայտուն կերպով արտահայտված հակահասարակական և իրենց տարիքին անհնարին պահանջմունքներ, գերաճած, «ուղղակի» ցանկություններ, որոնք անմիջականորեն կողմնորոշված են դեպի իրերը:

Դժվար է պատկերացնել ներքին ու արտաքին գործոնների այն բազմազանությունը, որոնք, ազդելով աճող երեխայի վրա, ամեն անգամ փոխում են նրա ապրումների աշխարհը: Ոչ բոլոր երեխաներն են տիրապետում իրենց մտքերին, զգացմունքներին և արարքներին: Երեխայի բախումը շրջապատող աշխարհի հետ ոչ միշտ է անցավ լինում հենց իր համար: Հաճախ կոտրվում են երեխայի սովորական դարձած պատկերացումներն ու դիրքորոշումները, փոխվում են ցանկություններն ու սովորությունները, ի հայտ է գալիս անվստահություն ուրիշների հանդեպ: «Դժվար» երեխաները ոչ միայն դաստիարակության, այլ նաև ուսուցման նկատմամբ ունեն վատ տրամադրվածություն և գրեթե միշտ խուսափում

[1] Գրին Է. / սենսիտենցիտ/ հոգեբանություն, Եր, 2022

են հասարակական աշխատանքից: Նրանց մոտ ուղղակիորեն տարբերվում է հաղորդակցական ոլորտը:

Կոլեկտիվի անդամների հետ մեծ մասամբ շփման մեջ չեն մտնում և հիմնականում օտարվում են տվյալ սոցիալական խմբից: Շփվելու պահանջմունքը նրանց մոտ խեղաթյուրված բնույթ ունի: Դեռահաս անձի դեֆորմացիան աստիճանաբար ձեռք է բերում նորանոր որակներ: Դրանցից առավել շատ կարող են զարգացում ունենալ սրանք.

1. Հիմնականում դեռահասը կամ դադարում է դպրոց հաճախել, կա՛մ պարբերաբար սկսում է բացակայել դասերից:

2. Հոգեբանական օտարացումը. խորը անջրպետ է առաջացնում ծնողների և նման երեխաների միջև: Թե՛ տանը, թե՛ դպրոցում երեխան դառնում է ինքնամփոփ, ծնողների և ուսուցիչների հետ չի շփվում, չի կիսվում նրանց հետ:

3. Որպես կանոն դասերից հետո ուշ է վերադառնում տուն, իսկ երբեմն նաև չի վերադառնում:

4. Նրանց սոցիալական վարքում սկսում են առաջ գալ շեղվող վարքի առաջնային նախանշանները: Շեղվող դեռահասը կարող է կատարել մանր խուլիգանություններ, գողություն, հանցագործություն: Նման դեռահասները շատ հեշտությամբ ընկնում են հանցավոր տարրերի ազդեցության տակ և ժամանակի ընթացքում ներքաշում այլ դեռահասների[2]:

5. Եթե նախկինում անհրաժեշտ էին օբյեկտիվ նախապայմաններ, որպեսզի դեռահասը ցուցաբերի շեղվող վարք, ապա այժմ նա ինքն է սկսում ստեղծել համապատասխան սոցիալական իրադրություններ: «Դժվար» երեխայի սոցիալական վարքագիծը իր նախահիմքում ունի գաղտնի շրջան, որը անվանում են նաև լատենտ շրջան: Շրջապատող միջավայրի աչքի առաջ տեղի է ունենում անձնավորության սոցիալ-հոգեբանական դեֆորմացիա, սակայն քանի դեռ այն գաղտնի վիճակում է և չի դրսևորվել

[2] Гаулагузова М.А. Социальная педагогика, Курс Л екций, М . 1999г

սոցիալական համակեցության ընդունված նորմերից կոնկրետ շեղումների ձևով, ապա նրա դեմ ոչ մի կոնկրետ քայլ չի ձեռնարկվում: Յուրահատուկ կերպով են ձևավորվում «դժվար» երեխաների հարաբերությունները ընկերների և մանկավարժների հետ, յուրահատուկ դրսևորումներ է ստանում նաև դաստիարակչական ներգործությունների նրանց կողմից ցույց տրվող «դիմադրությունը»:

Այդ պատճառով էլ կարևոր նշանակություն ունի «դժվար» երեխաների տիպերի առանձնացումը:

Դ. Ի. Նելդշտեյնը առաջարկել է «դժվար» երեխաների դասակարգում՝ հաշվի առնելով նրանց անձի բարոյական ոլորտի մասին ունեցած տվյալների միջամտությունը: Դեռահասների **առաջին** խումբը բնութագրվում է հասարակական առումով բացասական այնպիսի որակների կայուն կոմպլեքսով, ինչպիսիք են՝ անբնականոն անբարոյական ու տարրական պահանջմունքները, ակնհայտորեն հակահասարակական հայացքների համակարգը, ձևախեղված հարաբերություններն ու գնահատականները: Այդ խմբի դեռահասների մոտ խիստ թույլ է արտահայտված ամոթի զգացումը: Նրանք ցինիկ են, կոպիտ, կռվարար, չարացած, ագրեսիվ, անզուսպ, բռնկվող:

Երկրորդ խումբն են կազմում ձևախեղված պահանջմունքներ, ստորին կարգի ձգտումներ ունեցող դեռահասները: Սրանք փորձում են ընդօրինակել այն անչափահաս օրինազանցներին, որոնք ունեն կայուն համակարգ և հարաբերությունների ու հայացքների բացահայտորեն հակահասարակական ուղղվածություն: Նրանք խեղաթյուրված պատկերացումներ ունեն արիության և ընկերության մասին:

Օրինազանց դեռահասների **երրորդ** խմբի համար բնորոշ կոնֆլիկտն է ձևախեղված և դրական պահանջմունքների հարաբերությունների և հայացքների միջև: Այս խմբի դեռահասները գիտակցում են իրենց կատարած օրինազանցությունների անվայել լինելը: Սակայն նրանց ունեցած բարոյական ճիշտ հայացքները համոզմունքներ չեն դարձել, և հաճույքներ ստանալու եսասիրական հակումները կամ իրավիճակներին հակադրվելու անկարողությունը հանգեցնում են հակահասարակական արարքների, իսկ սրանք, իրենց հերթին՝ անբարոյական վարքի փորձի կուտակման: Այս խմբի դեռահասները աչքի են ընկնում ցուցադրական քաջությամբ, խորամանկությամբ, մարդկանց նկատմամբ անվստահությամբ ու անտարբերությամբ և իր անցյալը գովաբանելու սովորությամբ:

Չորրորդ խումբը կազմում են թեթևակիորեն ձևախեղված պահանջմունքներ ունեցող դեռահասները: Սրանց բնութագրող գծերն են. կամազրկությունը, թեթևամտությունը, անկայունությունը, սեփական ուժերի նկատմամբ անվստահությունը, ավելի ուժեղ կամքի տեր ընկերների առջև ստորաքարշություն անելը:

Հինգերորդ խմբի մեջ մտնում են այն դեռահասները, ովքեր պատահականորեն են օրինազանցությունների ուղին բռնել: Սրանք աշխատասեր են, ճշտակատար, ունեն կամքի բավական սուր զգացում, բայց կամազուրկ են և ընկնում են միջավայրի ազդեցության տակ:

«Դժվար» երեխաների տիպերի առանձնացումը թույլ է տալիս ոչ միայն ճշտել դաստիարակչական ներգործությունների համակարգն ամբողջությամբ վերցրած, այլև ուղիներ է բաց անում սուր կոնֆլիկտային իրավիճակներում գտնվող յուրաքանչյուր երեխայի նկատմամբ անհատական մոտեցում հանդես բերելու համար:

Վարքի շեղման հիմնական ձևերը.

Վարքի շեղման հիմնական ձևերն են՝ հանցագործությունը, ալկոհոլիզմը, թմրամոլությունը, (մարմնավաճառությունը), ինքնասպանությունը:

Հանցագործությունը, որպես վարքի շեղման տարատեսակ, բավական բարդ սոցիալական երևույթ է և սոցիոլոգիայում ու քրեագիտության մեջ դասվում է ամենավիճահարույցների շարքը: Սոցիոլոգիայում հանցագործության տակ հասկացվում է համեմատաբար տարածված վիճակագրորեն հաստատուն սոցիալական երևույթ, որը ունի քրեական օրենսգրքով որոշվող հասարակական վտանգավորության աստիճան[3]:

Ըստ հանցագործության հիմնադրի հետազոտության չափի հետազոտողները բացահայտել են դրա մի շարք պատճառներն ու գործոնները, որոնք ազդում են դրա դինամիկայի վրա, այդ թվում՝ սոցիալական դիրքը, զբաղմունքի տեսակը, կրթությունը, սոցիալական կարգավիճակը, անհատների, սոցիալական խմբերի և հասարակության միջև կապի բնույթը: ***Թմրամոլությունը*** համեմատաբար տարածված, վիճակագրորեն կայուն սոցիալական

[3] Ակրուշ յան, Բալ ա յ ան, «Սոցիալ ական մանկավարժու թյ ուն», Երևան 2002թ.

երևույթ է, որն արտահայտվում է հասարակության որոշ մասի կողմից թմրեցնող կամ թունավոր նյութերի օգտագործմամբ և համապատասխան հետևանքներով:

Թմրանյութերի օգտագործումը կարող է պայմանավորված լինել կամ հիվանդության ընթացքում բժշկի խորհրդով որպես դեղամիջոց (այսպես կոչված թմրանյութերի, բժշկական օգտագործում՝ ցավազրկիչ, հոգեկան խթանիչ, քնաբեր) կամ ոչ բժշկական բնույթ կրող օգտագործմամբ (չարաշահում): Այստեղ խոսքը արդեն թմրամոլության մասին է:

Թմրամոլությունը հիվանդություն է, որն արտահայտվում է թմրանյութերից, ֆիզիկական կամ հոգեկան կախվածությամբ, դրանց նկատմամբ ունեցած անհաղթահարելի ձգտումով, որը աստիճանաբար բերում է օրգանիզմի ֆիզիկական և հոգեկան գործառույթների խոր հյուծման: Թմրամոլությունը հասարակ կախվածություն չէ ինչ-որ որոշակի նյութի: Այն ունի իր պատճառները և լուրջ սոցիալական հետևանքները: Այս պատճառները մանրամասնորեն հետազոտվել են արևմտյան բժիշկների, հոգեբանների և, սոցիոլոգների կողմից: Կարելի է առանձնացնել պատճառների երկու խումբ:

1. Բանականության վրա կատարվող փորձարարություն, այն իրատեսության սահմաններից դուրս ընդլայնելու փորձ:

2. Սեփական ներքին բախումները հաղթահարելու փորձ:

Առաջին դրդապատճառը հատուկ է ինտելեկտուալ երիտասարդությանը: «Փորձարարները» բավարար չափով կրթված են, նրանք ուսումնասիրում են հոգեներգործական գրականություն, համացանցի միջոցով ծանոթանում են հոգեգործության նորարարություններին, միջոցներ են ձեռնարկում կախվածության սահմանը չանցնելու համար: Ենթագիտակցության հետ «փորձեր կատարելով» նրանք համաշխարհային կրոններում ընդունված հոգևոր գործնականությունը փոխարինում են թմրանյութերով, ինչը նման է գողացած պարաշյուտով տանիքից թռչելուն՝ առանց համոզված լինելու, որ այն կբացվի:

Թմրանյութի հետ հարաբերվելու երկրորդ պատճառը ավելի քան վտանգավոր է: Անվստահությունը, խորթությունը հանգեցնում են նրան, որ մարդը իր հիմնախնդիրների հաղթահարումը փնտրում է իրականությունից հեռանալու մեջ և «ինտելեկտուալի» հետ համեմատած ավելի պատրաստակամ է արձագանքում ծխելու առաջարկին կամ թմրանյութ

ներարկելուն: Ինչ էլ լինի թմրամոլության սոցիալական հետևանքները ողբերգական են թե՛ հասարակության, թե՛ անձի համար:

Թմրամոլության սոցիալական հետևանքները

Թմրամոլությունը, ինչպես հասարակության, այնպես էլ առանձին մարդու և նրա մերձակա շրջապատի համար ունենում է լուրջ հետևանքներ: Վերջին հաշվով թմրամոլության հետևանքն է թմրամոլների ֆիզիկական, հոգեկան և սոցիալական խեղումը, որը հանգեցնում է հասարակական կյանքից ավելի ու ավելի մեծ թվով մարդկանց արտամղվելուն:

Այդ միտման վտանգը խորանում է նրանով, որ թմրանյութ օգտագործողների մեծամասնությունը երիտասարդությունն է, այսինքն կյանքից աստիճանաբար «հեռանում է» բնակչության առավել ակտիվ և գործունյա մասը:

«Թմրամոլային ենթամշակույթը» ինչպես ամեն ենթամշակույթ, գիտակցաբար կամ անգիտակցաբար ձգտում է նորանոր անդամների ներգրավման միջոցով ընդլայնման, որը հանգեցնում է թմրանյութեր օգտագործողների քանակի աճի: Թմրամոլության հետևանքներից են կյանքից մարդկանց ուղղակի հեռանալը, ինքանասպանությունները: Թմրանյութերը սերտորեն կապված են դարի ամենասարսափելի հիվանդության ՁԻԱՀ-ի հետ: Վարակի հիմնական ուղիներ են դարձել ոչ միայն սեռական կապերը և բժշկական գործողությունները, այլև թմրանյութերի ներերակային ներարկումները:

Հարբեցողությունը (ալկոհոլիզմ) համեմատաբար տարածված, վիճակագրորեն կայուն սոցիալական երևույթ է, որն արտահայտվում է բնակչության մի մասի կողմից ալկոհոլային խմիչքների չարաշահմամբ և համապատասխան հետևանքներով: Սրա սոցիալական հետևանքները ավելի շատ կապ ունեն հանցագործության հետ՝ ավազակային հարձակումներ, թալան, սպանություններ, ծանր մարմնական վնասվածքների պատճառում:

Ալկոհոլիզմի հետ պայքարի պատմությունը ցույց է տալիս, որ հասարակության այդ երևույթի դեմ կիրառվում է պայքարի *2* եղանակ: **Առաջինը** կապված է ոգելից խմիչքների մատչելիության սահմանափակման, դրանց արտադրության և վաճառքի կրճատման գների

բարձրացման հետ: **Երկրորդը** կապված է ալկոհոլի պահանջարկի կրճատման, կյանքի սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման ընդհանուր բարեկեցության աճի, ալկոհոլի վնասի կշռադատման տեղեկատվության, բնակչության սթափ ապրելակերպի ձևավորման քարոզչության հետ: Սակայն այդ եղանակներից և ոչ մեկը չի նպաստել ազատվելու ալկոհոլիզմի սոցիալական ախտահարության ծանր ձևից:

Ինքնասպանությունը (սուիցիդը) կանխամտածված ձևով իրեն կյանքից զրկելն է: Ինքնասպանություն ասելով հասկանում ենք ***2*** տարակարգ երևույթներ՝ **առաջինը** անհատական վարքային ակտ, որոշակի մարդու կողմից իրեն կյանքից զրկել, **երկրորդը**՝ համեմատաբար զանգվածային վիճակագրորեն կայուն սոցիալական երևույթ, հասարակության որոշակի վիճակ, երբ մարդկանց որոշակի քանակ կամավոր հեռանում է կյանքից:

Ինքնասպանություն գործում են 55-ից ավելի և մինչև 20 տարեկան հասակում: Այսօր ինքնասպաններ են դառնում 10-14 տարեկան երեխաներ:

Շեղված վարքի բոլոր ձևերը կապակցված են և՛ ծավալով, և՛ բովանդակությամբ: Տվյալ կապակցությունը արտահայտվում է ինչպես անհատական վարքում, այնպես էլ զանգվածային արարքներում:

Շեղված վարքի բոլոր տեսակները ունեն միասնական սոցիալական բնույթ, որը թույլ է տալիս մշակել այդ երևույթի հետ պայքարի միասնական սկզբունքներ:

Գլուխ 2. «Դժվար» երեխաների վարքագծի նախադրյալների ձևավորման և զարգացման յուրահատկությունները

Երեխա դաստիարակելը բավականին դժվար գործընթաց է՝ առավել ևս «դժվար» երեխայի: Դաստիարակության էությունը կայանում է նրանում, որ նախ և առաջ պետք է «դժվար» երեխային դարձնել լիարժեք մարդ, հասարակության լիիրավ անդամ: Անհրաժեշտ է երեխային հասկացնել, որ նրա մեջ ձևավորված սխալ արժեքները ու վարքային այս կամ այն դրսևորումները պետք է վերացվեն: Սակայն այս երեխաները ունեն որոշակի առանձնահատկություններ: Նրանք համարում են, որ իրենց վարքը շատ նորմալ է: Անհրաժեշտ է այնպիսի մեթոդներ կիրառել, որոնք կստիպեն երեխային փոխել իրենց սխալ հայացքներն ու համոզմունքները: Դաստիարակչական մեթոդները ենթադրում է համապատասխան սոցիալ-մանկավարժական պայմանների օգտագործում: Մանկավարժական անհատական ներգործություններից առանձնացնում են **3** եղանակ.

1-ին եղանակի մեջ մտնում են.

ա) *խնդրանք օգնություն ցույց տալու մասին*- երեխայի կողմից վստահություն ձեռք բերելու համար ուսուցիչը նրանից խորհուրդ է հարցնում՝ պատմելով իր կյանքի մասին, օգնի գտնի ելք,

բ) *գնահատիր արարքը*- երեխայի բացասական դիրքորոշումը հայտնաբերելու և դրանք շտկելու համար դաստիարակը պատմում է մի պատմություն և խնդրում գնահատել տարբեր արարքները,

գ) *պատմվածք իր և մյուսների մասին*- դաստիարակը խնդրում է պատմվածք հորինել իրականի հիման վրա:

դ) *իմ իդեալը*,

ե) *հեքիաթ ուսուցանողի համար*- այստեղ օգտագործվում է հեքիաթաթերապիան: Պատմվում կամ հորինվում է հեքիաթ, որի հերոսները նման են երեխային և վերջում հորինում են բոլորը:

զ) *բարի արարք*- աշխատանքի ժամանակ երեխային խնդրվում է օգնություն ցույց տալ մեկին: Կարևոր է, որ այս արարքը ճիշտ գնահատվի, բայց դրան երբեք «հերոսական» տարր չտալ:

է) *դիմակ դերի համար*- երեխային խնդրում ենք մտնել ցանկացած դերի մեջ և ներկայացնել այն:

2-րդ եղանակը կարելի է դիմել խմբակային գործունեության:

*Չընդհատվող մտքեր*_երեխաները հերթականությամբ արտահայտվում են տրված թեմայի շուրջ՝ մեկը սկսում է, մյուսները՝ շարունակում կամ լրացնում, կամ կոնկրետացնում միտքը, հետո գնահատում: Կամ խմբերի բաժանված երեխաները իրար հարցեր են տալիս, իսկ հետո տրված հարցերն ու պատասխանները կոլեկտիվ քննարկման են ենթարկվում:

3-րդ խմբի եղանակը կապված է ուսուցչի կազմակերպչական գործընթացի հետ, ուղղված ուսուցանվողի շրջապատի պայմանների հետ.

ա) *հրահանգավորման եղանակ*- ինչ-որ աշխատանք կատարելիս երեխայի առջև կանոններ է դրվում՝ կապված վարքի և շփման հետ:

բ) *դերի համապատասխան բաժանում*,

գ) *կարծիքի շտկում*:

Հարկ է նշել, որ մի շարք մանկավարժական եղանակների մեջ գլխավոր տեղ է զբաղեցնում հումորը և դաստիարակի անձնական օրինակը, պայմանների փոփոխումը: Այս եղանակները կարող են շատ լինել՝ կապված իրադրությունից և անհատական կիրառումից, քանի որ մի եղանակը կարող է արդյունավետ լինել մեկի համար, իսկ մյուսի համար՝ ոչ: Ամենակարևորն այն է, որ դաստիարակը երբեք իր մեթոդների մեջ չպետք է օգտագործի պատժի եղանակ, քանի որ այն երեխայի մեջ կարող է առաջացնել անցանկալի

հետևանքներ՝ մեղքի զգացում թե՛ իր նկատմամբ, և թե՛ շրջապատի, բացի դա երեխան կարող է կորցնել վստահությունը դաստիարակի նկատմամբ և ինքնամփոփ դառնալ: Հետևաբար պետք է երեխայի արժանապատվությունը նվաստացնի: Եթե պատժի օգտագործումը անխուսափելի է, ապա այն պետք է լինի թեթև, ոչ թե ավանդական:

Դաստիարակչական աշխատանքներում մանկավարժի ճանապարհին հանդիպող դժվարությունների տարբերակման և՛ հոգեբանամանկավարժական, և՛ սոցիալ-հոգեբանական բնութագրեր կազմելու համար հիմնական նպատակը պետք է լինի գիտամեթոդական հիմքերի վրա դնել անհատական աշխատանքը յուրաքանչյուր երեխայի հետ, հասկանալ անձնավորության, նրա վարքի ձևավորման և դրա հնարավոր շեղումների հիմքում ընկած օրինաչափությունները: Վերջիններիս հետ հաշվի չնստելը ոչ միայն կարող է խանգարել երեխայի բարոյական վարքի տատանումների նախազգուշացմանը, այլ նպաստել դրանց էլ ավելի խորացմանը:

Այս թեմայով Ռատտերը նշում է, որ ընդունակ երեխաների նկատմամբ ուսուցիչները մեծ համակրանք են տածում և մեծ ուշադրություն դարձնում նրանց վրա, իսկ նրանց, ովքեր ուշադրության կարիք ունեն, թողնում են ստվերում կամ էլ ընդհանրապես մոռանում, ինչի հետևանքով անընդունակ երեխաները (ավելի ճիշտ նրանք, ովքեր մանկավարժի օգնության կարիք ունեն) իրենց վարքում շեղումներ են ցուցաբերում՝ անգիտակցաբար, ուշադրության գրավելու համար: Իսկ դաստիարակի հաճախակի անտարբերության հետևանքով շեղումները կարող են խորանալ: Չտարբերակելով դաստիարակչական աշխատանքում նկատվող դժվարությունների բնույթը, աշխատանքային սակավ փորձ ունեցող կամ անպատասխանատու ուսուցիչը մանկական կոլեկտիվում դժվարությամբ հարմարվող և կարգազանց երեխաների նկատմամբ ցուցաբերում է միատեսակ մոտեցում, կիրառում նույն մանկավարժական ներգործության մեթոդները: Այդ դեպքում արդյունքը լինում է այն, որ երեխայի առողջական վիճակով և տարիքային զարգացմամբ պայմանավորված դժվարությունները դաստիարակի կողմից ընկալվում են որպես սխալ դաստիարակության հետևանքների և, իհարկե, նրանց նկատմամբ ցուցաբերվում է սխալ, երբեմն էլ

հակամանկավարժական մոտեցում: Քիչ չեն դեպքերը, երբ նման մոտեցման հետևանքով այդ երեխաները ի վերջո համալրում են «դժվար» երեխաների կազմը:

Դեռահասության տարիքում «դժվար» երեխային հոգեբանամանկավարժական օգնություն ցուցաբերելիս պետք է նկատի ունենալ մի շարք պահանջներ.

1. *Տարիքային նպատակահարմարության պահանջը:*

Հաճախ դեռահասին «դժվար» երեխա համարելիս չեն փորձում պարզել, թե արդյոք դա գալիս է նախորդ տարիքային փուլերից, թե՝ ոչ:

2. *Անհատական և տարբերակված աշխատելու պահանջ:*

Յուրաքանչյուր երեխա պահանջում է անհատական մոտեցում:

3. *Մարդասիրական մոտեցման պահանջ:*

Բոլոր երեխաների նկատմամբ ցուցաբերել նույնատիպ վերաբերմունք՝ անկախ ամեն ինչից:

4. *Աշխատանքի զանազանության պահանջ:*

Այսինքն՝ կախված պայմաններից աշխատանքի ձևը պետք է լինի համապատասխան իրավիճակին:

5. *Էթնիկական առանձնահատկությունների հաշվառման պահանջը:*

Թվային պահանջների իրականացումը հիմնվում է կոնկրետ կանոնների վրա.

1. *Դրական դիրքորոշման կանոնը:*

Որպեսզի դրական արդյունքի հասնենք երեխայի հետ, առաջին հերթին հարկավոր է հաստատ դրական դիրքորոշում ձևավորել տվյալ երեխայի նկատմամբ:

2. *Փոխգործունեության վստահության օրենք:*

Երեխայի հետ աշխատանքում պետք է հասնել փոխադարձ վստահության ստեղծմանը անկախ այն բանից, թե որքան ժամանակ այն կպահանջի: Հակառակ դեպքում երեխան կփակի իր ներաշխարհը և երբեք էլ չի ընդունի որևէ օգնություն, մինչև իրեն պաշտպանված և ապահով չզգա:

3. Փոխգործունեության սուբյեկտիվության օրենք:

Երեխային հարկավոր է օգնել միայն այն դեպքում, երբ նա կլինի ոչ թե փոխազդեցության օբյեկտ, այլ՝ սուբյեկտ:

4. Պատճառականության օրենք:

Կոնկրետ երեխայի վարքը միշտ ինչ-որ բանի արդյունք է:Առաջին հերթին պետք է պարզել, թե արդյոք նորմայից շեղվող վարքի պատճառները դեռահասության տարիքում հետևյալն են.

- ուշադրություն գրավելու ձգտում,
- ինքնահաստատման ձգտում,
- մարդկային արժեքների արժեզրկում:

5. Փոխհարաբերություններում հաջորդականության օրենք:

Դժվար մենք կարողանանք օգնել երեխային, եթե հաճախ փոխենք մեր տեսակետը կամ մեր խոսքը չհամապատասխանի գործին, սակայն, եթե մեր տեսակետը փոխվել է, ապա հարկավոր է երեխային պարզապես բացատրել դրա պատճառները:

6. Փոխգործունեության դրական ուղղվածության օրենք:

Այս օրենքը նպաստում է.

ա) ձևավորել դրական նպատակ,

բ) որոշումներ ընդունելիս տարբերության ցուցաբերում կոնկրետ պահվածքի վերաբերյալ և դրա կիրառումը դժվար իրավիճակներում,

գ) մեծ ռիսկի հետ կապված իրավիճակների ցուցադրում,

դ) լրացուցիչ հմտությունների ցուցադրում:

Եզրակացություն

Այսպիսով, կատարած վերլուծության և փորձարարական աշխատանքների արդյունքում ստացված տվյալները հնարավորություն են տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

1) «Դժվար» է կոչվում հակահասարարական կամ սոցիալական վարքագիծը, որը չի համապատասխանում հասարակության պահանջներին և բարոյական նորմերին:

2) «Դժվար» երեխաների վարքը սոցիալականորեն դետերմինավորված է:

3) Դեռահասության տարիքում «դժվար» երեխաներին բնորոշ են.

1. Դեպրեսիվ վարքագծային դրսևորումներ, ագրեսիա, ստախոսություն, թշնամանք հասակակիցների և մեծահասակների նկատմամբ,

2. Ինքնապարփակում սեփական ներաշխարհում,

3. Անվստահություն մեծահասակների և հասակակիցների նկատմամբ,

4. Դեռահասության տարիքում «դժվար» երեխայի վարքի ձևավորման պատճառ կարող են հանդիսանալ.

- Ընտանեկան կոնֆլիկտները
- Ծնողական անբարենպաստ սերը
- Ծնողներից մեկի բացակայությունը
- Անբարենպաստ սոցիալական միջավայրը
- Անտեղի պատժամիջոցները
- Հասակակիցների կողմից մերժվելը
- Դպրոցական ուսուցման թերությունները

5. Դեռահասության տարիքում «դժվար» երեխայի ձևավորման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից մեկը անբարենպաստ ընտանիքն է: Երեխան պետք է մեծանա նորմալ, բարենպաստ պայմաններում: Յուրաքանչյուր սթրես, կոնֆլիկտային կամ անորմալ

վիճակ բացասական մեծ ազդեցություն է թողնում երեխայի հոգեկանի վրա: Անձի, երեխայի հոգեկան գործընթացների փոխներգործությունները կատարվում են սոցիալական միջավայրում՝ ընտանիքում, որտեղ կան որոշակի հոգևոր արժեքներ, վարքի և հաղորդակցման կանոններ ու նորմեր:

6. «Դժվար» երեխաները մանկավարժորեն բարձիթողի երեխաներ են: Նրանց բարոյական գծերի ձևախեղումը մանկավարժական սխալների հետևանք են:

Չնայած լուրջ խնդիրներին, անհրաժեշտ է կանխման միջոցներ ձեռնարկել ռիսկի գոտում գտնվող երեխաների մանկավարժորեն բարձիթողության շտկման ուղղությամբ, եթե մենք հավատում ենք, որ մեր արժանավայել ապագայի և հզոր պետության կերտողները մենք ենք:

Այսպիսով, «դժվար» երեխաներ են անվանում այն մեծաթիվ երեխաներին, որոնց անձի կառուցվածքը ուղղումների կարիք է զգում, նման երեխաների թվի աճը կանխելու հիմնական ուղին նրանց վարքագծի և անձնային թերությունների իրական պատճառների բացահայտումն է երեխայի պահանջմունքների ու հետաքրքրությունների նկատմամբ ուշադրություն հանդես բերելն է, որը պետք է զուգորդվի պահանջկոտության հետ: Նման երեխաներին պետք է օգնել ադապտացիայի, նոր սոցիալական դերերի յուրացման, հեռավոր կյանքի ուղիների ընտրության հարցերում: Դեռահասի դեզադապտացիայի հոգեբանական նախապահպանությունը և հոգեշտկումը իր մեջ ընդգրկում է դեռահասի անհատականության հոգեբանամանկավարժական բազմակողմանի ուսումնասիրությունը (անհատի ախտորոշումը), սոցիալական միջավայրի անբարենպաստ գործոնների բացահայտումը և ուսումնասիրումը (միջավայրի ախտորոշում), միջավայրի շտկում, ուղղում և դեռահասի անհատականության ներդաշնակ գծերի հոգեշտկում:

Գրականության ցանկ

1. Ասմոլով Ա. Գ « Անձի հոգեբանություն» Մոսկվա, 1974թ.

2. Արզումանյան Ս. ,Մկրտչյան Ս. , Սարգսյան Վ «Կիրառական հոգեբանության պրակտիկում» Երևան, 2002թ.

3. Նալչանջյան Ա. « Ընդհանուր հոգեբանության հիմունքներ», Երևան 1998թ.

4. Պետրովսկի Ա. Վ. « Տարիքային և մանկավարժական հիմունքներ»

5. Выгодский Л. С «Собрание сочинений» Москва, 1984г.

6. Захаров А. С «Как предупредить отклонения в поведении ребёнка» Москва 1984г.

7. Будянов «Ребёнок из неблагополучной семьи» Москва, 1984г.

8. Мухина В. С «Возрастная психология», Москва, 1998г.

9. Раттер М. «Помощь трудным детьям», Москва 1987г.

10. Словина Л. С «трудные дети» Москва, 1998г.

Հավելված

Գիտահետազոտական մաս

«Դժվար» երեխաների հետ տարվող փորձարարական աշխատանքները

«Դժվար» երախաների վարքագծի մեխանիզմների ու պատճառների բացահայտման և մանկավարժական արդյունավետ ներգործության ուղիների և միջոցների առաջադրման նպատակով հետազոտական աշխատանքներ են անցկացվել դեռահասության տարիքի տարբեր երեխաների շրջանում:

Փորձարարական աշխատանքները կազմակերպվել են փուլով.

1. Արձանագրող_ փորձարկող
2. Ձևավորող
3. Ստուգիչ

Արձանագրող գիտափորձ

Առաջին փուլ

Արձանագրող փուլի նպատակն է բացահայտել «դժվար» երեխաներին բնորոշ գծերը, շեղումները, ինչպես նաև դրանց հիմքում ընկած պատճառները: Արձանագրող փուլում օգտագործվել են դիտման («դժվար» երեխայի դիտարկման քարտ), զրույցի մեթոդները, «Տուն, ծառ, մարդ», «Ընտանիքի նկարը» պրոյեկտիվ մեթոդները, ինչպես նաև «Անձնավորության շեշտվածության հարցարանը ըստ Կ. Լեոնհարդի», «Կետտելի անձնային հարցարանը» թեստերը:

Կիրառված մեթոդների, մեթոդիկաների միջոցով բացահայտվել են երեխաների միջև միջանձնային հարաբերությունները, նրանց անձնային որակները, վարքագծային դրսևորումները, անձնավորության առանձնահատկությունները:

Ձևավորող գիտափորձ

Երկրորդ փուլ

Ձևավորող փուլի նպատակն է «դժվար» երեխաների վարքի շտկման ուղղությամբ տարվող մանկավարժահոգեբանական ներգործությունների, մեթոդների և ձևերի կազմակերպումը՝ ուղղված ինչպես երեխաներին, այնպես էլ նրանց ծնողներին:

Ստուգիչ գիտափորձ

Երրորդ փուլ

Գիտահետազոտական մասի այս փուլի նպատակն է բացահայտել «դժվար» երեխաների մոտ մասամբ ի հայտ եկած դրական փոփոխությունները ձևավորող գիտափորձից հետո և ստացված արդյունքները համեմատելով արձանագրող փուլի արդյունքների և ցուցանիշների հետ՝ հանգել համապատասխան եզրակացության: Ձևավորող գիտափորձի արդյունքները ճշտելու նպատակով ստուգիչ փուլում նորից երեխաների հետ անց է կացվել «Կետտելի անձնային հարցարանը» թեստը:

Այսպիսով, վերլուծության արդյունքներից պարզ է դառնում, որ այս երեխաների հետ համապատասխան և ճիշտ աշխատանք տանելու դեպքում, հնարավոր են դրական փոփոխություններ:

Հավելված 1

Հավելված 2

Ձեզ առաջարկվում են հարցադրումներ, որոնք վերաբերվում են Ձեր բնավորությանը: Եթե դուք համաձայն եք այդ հարցադրումներին, խնդրում ենք այդ հարցադրման կողքին դնել «+» նշանը, եթե ոչ՝ «-» նշանը: Հարցերի շուրջ երկար մի մտածեք, քանի որ չկան ճիշտ և սխալ պատասխաններ:

+ 1. Ձեզ մոտ հաճախ է լինում ուրախ և անհոգ տրամադրություն
– 2. Դուք զգայուն եք վիրավորանքների նկատմամբ
– 3. Լինու՞մ է արդյոք այնպես, որ ձեր աչքերը լցվեն արցունքներով կինո դիտելիս, թատրոնում, զրույցի ժամանակ
– 4. Որևէ բան անելուց հետո, դուք սկսում եք կասկածել, արդյոք ամեն բան ճիշտ եք արել, և չեք հանգստանում այնքան ժամանակ, մինչև չեք համոզվում, որ ամեն բան ճիշտ եք արել
+ 5. Սանուկ հասակում դուք նույնպես համառ էիք և քաջ, ինչպես Ձեր հասակակիցները
+ 6. Հաճախ է արդյոք Ձեր տրամադրությունը փոփոխվում կյանքի նկատմամբ, անսահման ցնծությունից մինչև զզվանքի զգացումը
+ 7. Հանդիսանում եք արդյոք ընկերական շրջապատի կամ որևէ կոլեկտիվի ուշադրության կենտրոնում
+ 8. Լինում է այնպես, որ դուք առանց պատճառի այնպիսի փնթփնթան տրամադրությամբ լինեք, որ ավելի լավ է Ձեզ հետ չխոսել
– 9. Դուք լու՞րջ մարդ եք
– 10. Ընդունակ եք արդյոք զմայլվել, հիանալ ինչ-որ բանով
+ 11. Նախաձեռնող եք արդյոք Դուք
– 12. Եթե ինչ-որ մեկը Ձեզ նեղացնում է , դուք արագ մոռանում եք
– 13. Փափկասի՞րտ եք արդյոք Դուք
– 14. Նամակը գցելով փոստարկղի մեջ՝ դուք Ձեռքով ստուգում եք, թե նամակը ընկավ փոստարկղի մեջ, թե ոչ
+ 15. Ձգտում եք Դուք միշտ լինել լավագույն աշխատողների շարքում
– 16. Մանկության տարիներին Դուք վախենում էիք ամպրոպից կամ շուն տեսնելիս, իսկ մի գուցե նման զգացում այժմ էլ եք ունենում
– 17. Ձգտում եք դուք ամեն ինչում և ամեն տեղ կարգ պահպանել

+ 18. կախված է արդյոք Ձեր տրամադրությունը արտաքին հանգամանքներից
– 19. Ձեր ծանոթները Սիրում են արդյոք Ձեզ
+ 20. Հաճախ է արդյոք ձեզ մոտ լինում ներքին խիստ անհանգստության, հնարավոր դժբախտության կամ տհաճության զգացում
– 21. Ձեզ մոտ հաճախ է լինում փոքր-ինչ ճնշված տրամադրություն
+ 22. Եղել է արդյոք Ձեզ մոտ հիստերիա կամ նյարդային պորթկում թեկուզ մեկ անգամ
+ 23. Դժվար է Ձեզ համար երկար նստել միևնույն տեղում
+ 24. Եթե ձեր նկատմամբ անարդար են վարվել, եռանդով եք Դուք պաշտպանում Ձեր իրավունքները
+ 25. Կարող եք արդյոք Դուք հավ կամ ոչխար մորթել
– 26. Բարկացնում է ձեզ, եթե տանը վարագույրը կամ սփռոցը անհավասար են կախված և այն փորձում եք միանգամից ուղղել
– 27. Դուք մանուկ տարիներին վախենում էիք տանը մենակ մնալ
– 28. Հաճախ է ձեզ մոտ առանց պատճառի տրամադրության անկում լինում
– 29. Միշտ եք արդյոք Դուք ձգտում լինել բավականաչափ լավ մասնագետ Ձեր աշխատանքում
+ 30. Արագ եք սկսում բարկանալ կամ չարանալ
+ 31. Կարող եք լինել բացարձակ անհոգ, ուրախ
+ 32. Լինում է այնպես, որ լիարժեք երջանկության զգացումը ուղղակի պատում է Ձեզ
– 33. Ինչ եք կարծում, Դուք կկարողանայիք լինել ներկայացման կամ համերգի վարող
– 34. Դուք ընդհանրապես արտահայտում եք Ձեր կարծիքը մարդկանց բավականին անկեղծ, ճիշտ և առանց երկակի իմաստի
– 35. Դուք դժվարությամբ եք տանում արյան տեսքը: Չի առաջացնում արդյոք այն տհաճ զգացումներ Ձեզ մոտ

– 36. Սիրում եք Դուք բարձր անձնական պատասխանատվություն պահանջող աշխատանք
– 37. Հակված եք արդյոք Դուք պաշտպանել մարդկանց, որոնց նկատմամբ Ձեր կարծիքով անարդար են վարվել
– 38. Ձեզ համար դժվար և վախենալի է իջնել մութ նկուղ
+ 39. Գերադասում եք Դուք այնպիսի աշխատանք, որտեղ պետք է արագ գործել, բայց չի պահանջվում բարձր որակ
+ 40. Շփվող եք արդյոք Դուք
– 41. Դուք դպրոցում հաճույքով էիք արտասանում բանաստեղծություններ
+ 42. փախե՞լ եք արդյոք Դուք տանից մանկության տարիներին
– 43. Կյանքը ձեզ դժվա՞ր է թվում
+ 44. Լինում է այնպես, որ կոնֆլիկտից, վիրավորանքից հետո, Դուք այն աստիճանի վշտացած լինեք, որ որևէ աշխատանքով զբաղվելն ուղղակի անտանելի է թվում
+ 45. Կարելի է ասել, որ անհաջողության դեպքում դուք չեք կորցնում հումորի զգացումը
– 46. Եթե Ձեզ որևէ մեկը նեղացներ, կնախաձեռնեիք առաջին քայլերը հաշտության համար
– 47. Դուք շատ եք սիրում կենդանիներին
– 48. Դուք միշտ վերադառնում եք որպեսզի համոզվեք, որ տունը կան աշխարանքի վայրը թողել եք կարգին վիճակում
– 49. Ձեզ հետապնդում է երբեմն ոչ պարզորոշ միտք, որ Ձեզ և Ձեր մտերիմների հետ կարող է պատահել ինչ-որ սարսափելի բան
+ 50. Համարում եք արդյոք Դուք, որ ձեր տրամադրությունը շատ փոփոխական է
+ 51. Դժվար է Ձեզ համար ելույթ ունենալ հանդիսատեսի առջև
+ 52. Դուք կարող եք հարվածել Ձեզ նեղացնողին, եթե նա Ձեզ վիրավորի
– 53. Ձեզ մոտ շատ մեծ պահանջ կա այլ մարդկանց հետ հաղորդակցվելու

– 54. Դուք այն մարդկանցից եք, որոնք որևէ հիասթափության դեպքում ընկնում են խորը հուսահատության մեջ
– 55. Ձեզ դուր է գալիս աշխատանք ,որը պահանջում է եռանդուն կազմակերպչական գործունեություն
+ 56. Համաձորեն եք արդյոք դուք ձգտում ընտրված նպատակին, եթե նրա ճանապարհին ստիպված եք հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ
– 57. Կարող է արդյոք ողբերգական ֆիլմը ձեզ այնպես հուզի, որ Ձեր աչքերը արցունքով լցվեն
+ 58. Հաճախ է Ձեզ դժվար լինում քնել այն պատճառով, որ նախորդ կամ հաջորդ օրվա խնդիրները անընդհատ պտտվում են Ձեր մտքում
+ 59. Դպրոցում Դուք երբեմն հուշում էիք Ձեր ընկերներին, կամ թույլ էիք տալիս արտագրել
– 60. Կպահանջվի արդյոք Ձեզանից մեծ լարում, գիշերը գերեզմանոցով անցնելու դեպքում
+ 61. Դուք հանգամանորեն եք հետևում այն բանին, որ յուրաքանչյուր իր Ձեր բնակարանում լինի միևնույն տեղում
– 62. Պատահում է արդյոք այնպես, որ քնելիս լինեք լավ տրամադրությամբ, իսկ առավոտյան արթնանաք վատ տրամադրությամբ
– 63. Դուք արդյոք հեշտությամբ եք հարմարվում նոր պայմաններին
+ 64. Լինում են արդյոք ձեզ մոտ գլխացավեր
– 65. Դուք հաճախ եք ծիծաղում
+ 66. Դուք կարող եք արդյոք բարեհամբույր լինել նրա հետ, ում բացահայտորեն չեք գնահատում, չեք սիրում, չեք հարգում
– 67. Դուք շարժուն մարդ եք
+ 68. Դուք շատ ապրումներ եք ունենում անարդարության պատճառով
+ 69. Դուք այնքան եք բնություն սիրում, որ կարող եք Ձեզ նրան ընկեր համարել
+ 70. Տանից դուրս գալիս կամ քնելուց առաջ ստուգում եք արդյոք դուռը փակ է կամ բոլոր լույսերն են անջատված
– 71. Դուք շատ վախկոտ եք
+ 72. Երբեմն զգում եք դեմ տրամադրված երբեմն [illegible]

Հավելված 3



Դիտարկման թերթ

I. ԱՎ -ԱՆՎԱՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ,ԻՐԵՐԻ,ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1. Խոսում է ուսուցչի հետ միայն այն ժամանակ, երբ նրա հետ որևէ հարց է առաջացած է:
2. Լաց է լինում, երբ իրեն նկատողություն են անում:
3. Երբեք ոչ մեկին օգնություն չի առաջարկում, բայց հանձնարարվ օգնում է, երբ նրան խնդրում են:
4. «Ենթարկիրկ» եզրերս է ժամանակվում է «անշտահաեռ» դերերի, օրինակ, խաղի ժամանակ դերում է գնդակը բերելու:
5. Նրա հետաքրքրությունը չափից ավելի մեծահասակված լինեցուց է:
6. Սակ է խոսում վախից:
7. Ուսուցչին երբեք նվեր չի բերում, նրան ցույց չի տալիս գտած իրերը, իր խաղալիքները:
8. Ունի միայն մի լավ ընկեր և, որպես կանոն, արհամարհում է մյուս համադասարանցիներին:
9. Բարևում է ուսուցչին միայն այն ժամանակ, երբ նա իր վրա ուշադրություն է դարձնում: Ճանկնանում է, որ իրեն նկատեն:
10. Սեփական նախաձեռնությամբ ուսուցչին չի մոտենում:
11. Չափազանց ամաչկոտ է որևէ բան խնդրելու համար (օրինակ՝ օգնություն):
12. Հեշտությամբ դառնում է «ջղային», լաց է լինում, կարմրում, եթե իրեն հարց են տալիս:
13. Հեշտությամբ է հրաժարվում խաղին ակտիվորեն մասնակցելուց:
14. Խոսում է առանց սրտատեսության, փնթփնթում է, մանավանդ այն ժամանակ, երբ իրեն բարկում են:

II. ԴՊ - ԴԵՊՐԵՍԻԱ

1. Նայած ինքնազգացմանը՝ կամ խնդրում է, որ իրեն օգնեն հանձնարարությունը կատարել, կամ ոչ:
2. Ազատ ժամանակ երբեմն ոչ մի բանի նկատմամբ բացարձակապես հետաքրքրություն չի դրսևորում:
3. Աստիպրեալ է, գործը կատարելիս կարգնում է հետաքրքրությունը դրա նկատմամբ:
4. Դարդոց է, աշխատել մեկակ, բայց շատ է հոգնում:
5. Ձեռքի աշխատանքի համար ֆիզիկական ուժերը չեն հերիքում:
6. Թերքած է, անհանգիստ (դասարանում):
7. Հաճախ դիտվում են ներգրգռիչ հանկարծակի ու կտրուկ գործողներ:
8. Շարժումները զգնդաղկոտ են:
9. Չափից ավելի անտարբեր է, որ ինչ-որ պատահում վշտանա:
10. Հայացքը «քութ» է և անտարբեր:
11. Խաղում միշտ ծույլ է ու անտարբեր:
12. Հաճախ հարցմանի երազում է:
13. Կարելցանք է հարուցում (ճնշված է, դժբախտ), հազվադեպ է ծիծաղում:

III. ԻՊ - ԻՆՔՆԱՊԱՐԾԱԿՈՒՄ

1. Երբեք ոչ մեկին չի բարևում:
2. Ուշադրություն չի պատասխանում:
3. Ընկերասիրության և բարեգործության չի դրսևորում որևէների հանդեպ:
4. Խոսում է հոգեբոյությունների («ինչնամիտ է»):



5. Երբեմն է, դասին սովորելու փոխարեն զբաղվում ինչ-որ արտաքին աշխատանքով:
6. Բարդությունի չի հնազանդվում ձեռքի աշխատանքով:
7. Հետաքրքրություն չի դրսևորում խմբային խաղերի նկատմամբ:
8. Խուսափում է մարդկանցից:
9. Հետո է մնում մնացածից, եթե ինչ-որ բանից հեռացած է կամ ինչ-որ բան է անում իրեն կամակատար են:
10. Բարդությունի մեկնաբանում է մյուս երեխաներից մի քանի մոտենալուց անմիջապես:
11. Աչքաբիա տարվածություն է ստեղծվում, կարծես բարդությունի չի նկատում որևէներին:
12. Խոսելիս անհանգիստ է, խոսակցության թեմայից շեղվում է:
13. Իրեն պահում է «զգուշավոր զգալանիկի» պես:
14. Ոչ մեկի հետ երկար ժամանակ ընկերություն չի անում:
15. Երբեմն, եթե իր հետ խոսում են, դեմքից երևում է, որ «մոլորված ոչի» տեղ է:

IV. ՏՇ - ՏԱԳԼՈՊԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՇՈՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1. Հետ պատասխանատվությունն կատարում է իր պարտականությունները:
2. Դյուտորում է ուսուցչին բարելու չափազանց մեծ ցանկություն:
3. Չափից ավելի սեռդ-խոսող է (Անվերջանում է իր շուտասիությամբ):
4. Մեծ հանդուրով ուսուցչին բերում է ձեռքիկներ և ուրիշ նվերներ:
5. Շատ հանախ թիրամ և ցույց է տալիս ուսուցչին իր գտած իրերը. հնչեցնում նաև նկարներ, մոդելներ և այլն.
6. Չափազանց խարդաճանակ է ուսուցչի նկատմամբ:
7. Չափազանց շատ է պատմում ուսուցչին իր տեսածն զբաղմունքների մասին:
8. «Հարմանկով այլ է մոնում», աշխատում է դեռ զալ ուսուցչին:
9. Միշտ գտնում է որևէ պատրվակ, որպեսզի ուսուցիչը զբաղվի իր անձով.
10. Մշտապես ուսուցչի օգնության և ուշադրության կարիք է զգում:
11. Փորձում է ուսուցչին «գայթակղել իր սեփականը» զբաղեցնելով նրան բազմատեսակ անհամար իրեներով:
12. Պատմում է ֆանտաստիկ, հնարովի պատմություններ:
13. Փորձում է հնազարդրել չափահասներին իր անձով:
14. Չափազանց մոսահոգված է, որ մեծերն իրենով հետաքրքրվեն. ձեզի թերի նրանց համակարգը:
15. Բարդությունի «Ինչ-որ անում է», եթե իր ջանքերը հաջողությամբ չեն պսակվում:

V. ԹՇ - ԹՇԵԼՍՈՒԹՅՈՒՆ ՇՈՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

1. Հաճախ վատ տրամադրություն է ունենում:
2. Իր օգնությունը կամ ծառայությունները առաջարկում է միայն հանձնարարական — տրամադրություն ունենալիս:
3. Երբեմն ձգտում է բարևել ուսուցչին, երբեմն էլ դրանից խուսափում է:
4. Շատ անկայուն է վարքում: Երբեմն թվում է, որ նա դիտմամբ վատ է կատարում աշխատանքը:
5. Վնասում է հանդարտվելուն և անձնական գոյքը (գոտեր, տոպրակ, սրբանոթներում):
6. Գոնվիկ խոսք, սպառնալիքներ, ոտանավորներ և նկարներ: Անպարկեշտ վարք:
7. Հեռվ նայկա է, մանավանդ երբ պաշտպանվում է իրեն ներքևությունից մեղադրանքից:
8. Դեղոն տոնով «վնասվեցիր է թթի տակ», ասդեմով է:
9. Բաղաձայնում է վերաբերվում նկատողություններին:
10. Մեկ-երկ ստախոսում է առանց որևէ պատճառի և առանց օրինաչության:
11. Եղել է որ վող, քաղցրությունվ.ք. թանկագին իրեր է տոգրել:
12. Միշտ պիտ բանը հարմարում է և հեռանում, որ իրեն անտարբերությունն պատանել նեռ
13. Ունի «մեղմեն հարաց». Ակրի տանում է հարում:
14. Շատ անհնազանդ է, անընդունակ:

VI. ՏԵ - ՏԱԳԼՈՊԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1. «Վարակ է խոսում», սառանանալու երբ իրեն հետաքրքրում են անում:
2. Չի կարող «դիտանանարդ» ջանել իր շրջապատի մարդկանց առաջ:
3. «Պանդ Մասկիրա» հոլիքնեռության ունի:
4. Չասիրց ավելի հանդարտ է (անանդ տիպի է դիտում):
5. Հոգ է տանում այն մասին, որ միշտ գլուխ անմասնանության կարգը: Կարում է որիշների:
6. Միշտ է լինել ուշադրության կենտրոնում:
7. Խաղում է բարդատանը «Ցու» գրեթե բարդատանա) իրենից մեծ երեխաների հետ:
8. Աշխատում է պատանանանում դիրք գրավել, բայց վախենում է, որ չի կարողանա դրանից գրգռ ունել:
9. Պարզնում է որիշ երեխաների մոտ:
10. Իհարկատարություն է անում (ինքնից մեծերանց մարդանց):
11. Արագիր է, եթե ուսուցիչը դասավանում չ:
12. Հոգեկոր է հանդարտակ (չարվանք, տանվածանք՝ ստրանք; չափազանցության հարդասում, հարդարանքում՝ ստրանքներ:
13. Մեծ հանդարտ վիրանում է հասարակության գոյքը:
14. Ունենք պարարնեք հասարակերեների շրջանում:
15. Ընդունվում է որիշների հոգեբանական պարարնքը:

VII. ԱՍ - ՍԵԲԱՎՈՐԱԾ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻՆ (ԱՄՈՒԹԱԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)

1. Անաչխատ չ, բայց դասարանում է անասարկությունն ասաջի հարցերին պատասխանելիս:
2. Ամենիրա չ, բայց երբեք օգնության չի խնդրում:
3. Կանոնիրը ոչ մի աշխատանք չի ձեռնարկում:
4. Սեռնասանանների բարդությունը իր համար ոչ մի նշանակություն չանի:
5. Ուսուցչի հետ զրուցելիս հարգում է հեղինակությունն, բայց սոցիալական մեջ շրջում է որիշ մարդկանց հետ:
6. Դիրքում գնդանեկիս նիստ կարգիք սրանանդեքիս տեսնվում է որիշներից:
7. Աշխատում է տեսանի աշխատանքներ:
8. Աշխատում է որիշի գրքերը առանց թույլտվության:
9. Հետաքրքիր է, պիրում է բանաստեղծություն սենչ, հանդարտում է խաղալ որիշ երեխաներին
10. Երեխաների հետ խաղալիս խոչընդոտվել է և տեսանվել:
11. «Խաղրանիս խաղացող է» դասում է միայն հանուն իր անձնական շահի, խաղալիս խանգում:
12. Չի կարող ուրիշ նայել մարդկանց աչքերին:

VIII. ԹԵ - ԹՇԵԼՍՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

1. Խանդոտում է որիշ երեխաների խաղալ, ծաղրում նրանց, պիրում փնթփնթել:
2. Լցվում շատ անզգայությամբ է ուն երեխաների հանդեպ, որոնք չեն պատասխանում իր շնորհն տերս ցցանանվին:
3. Ընդհանրապես է Երեխաներին, անձնասարար կարում նրանց:
4. Դեռևս է, նեռ ուզում երեխաներին:



5. Փորձում է իր նկատողություններով ստեղծել որոշ դեպքերություններ որպես երեխաների համար:
6. Խանդոտ է, նախանձ:
7. Բարդությունի է կամ ոչնչանում որևէ երեխաների պատվանդանը իրերը:
8. Երեխաների հետ իր հարաբերությունները հիմնականում վատն են:
9. Հեշտությամբ մասնակում է դասընկերներին:
10. Մասնակիցներ է ու կասկածամիտ երեխաների հետ:
11. «Հայրում» է իրենից թույլ երեխաներին:
12. Երեխաները իրեն չեն վիրում կամ նոպնիսկ տանից չեն կարող:
13. Հանախ, իր «վատասկով», վատության է անում, ցավ պատճառում և այլն:
14. Իրենից բարդությունները դանում են իր «մեծագույն թշնամիները»:
15. Կոպում է անպատշաճ ձևով (ձեռամ, ձանկերում և այլն):

IX. ՀԼ - ՀՈՒԶԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Խոսքում է անհեպի խարդախիներով, որոնք չափազանց մանկական են իր տարիքի համար:
2. Միշտ է խաղալ, բայց շատ է կորցնում հետաքրքրությունը:
3. Չափից ավելի մանկությունական է իր խոսքում:
4. Շատ անհաս է, որ կարողանա ուշադիր լսել ու կատարել հանձնարարությունը:
5. Խաղում է միայն (կամ առանձնապես) իրենից փոքր որևէ բան սենչում:
6. Չափազանց տարվողական է, որպեսզի դիտում լինելի որևէ բան սենչում:
7. Ուրիշ երեխաներից «ջղում» են իրեն ունա «ջղային նոխազ է»:
8. Հանախ կասկածում են, որ նա դասերից փախչում է, թեև նա փոչեց է դա անել մեկերկու անգամ:
9. Հանախ ուշանում է:
10. Լալամ է ոչ-ոչնչի գասեր:
11. Անկարգակերպ է, անեղարգ, ցրված:
12. Խոչում (դասարանում) իրեն պահում է կողմնակի. ջղլան մարդու պես:
13. Հայացքը և մարմինը միշտ դիտում գրեթե միշտ լարված են:
14. Առանց բարձրաձայն պատասխան նարդ է հանելիսած «պարզ»է, բայց լինել և այլն:
15. Ցանկացած աշխատանք կատարում է անհոգ. կարծես դա ամենանշանակոր լինի իր կանգնում:

X. ՆԱ -ՆԵԿՐՈՏԻԿ ԱԽՏԱՆԻՇՆԵՐ

1. Հանկարծ է, ունի խոսքի արդիկանություն: Նրանից գիտվում է «վատ քաշեր»:
2. Խոսում է անկանոն:
3. Աչքերը հանախակի թարթում է:
4. Անհարմար շարժումներ է անում մեջքերով: Բազմազան «տիկեր» ունի:
5. Եղունգները կրծում է:
6. Բարում է «գատիրոտեղով»:
7. Մաղց ծծում է (10 տարեկանից մեծերի համար):
8. Բարում կամ արեում է անկերգ, թարթիչներ.
9. Անընդհատ վերառուցում է կատարած աշխատանքը

XI. ՇՊ -ՇՐՋԱՊԱՏԻ ԱԼԲՈՒՐԵՆԱՊԱՍ ՊԱՅՍԱՆՆԵՐ

1. Հանախ բարդանում է դարդերից.
2. Ամենայն ոչ սեռերանանա պարդանում չ լինում.
3. Ընտանիքում լրիվ նորմալ է. միայն երեխան դեռ չ.

4. Մեծերները չեն հետաքրքրվում նրա դարդերանան կանգով:
5. Մեծերները դիտանարդանում ստում են պրարդարանելով երեխային բարդարդարդանց:
6. Մտմիարված է սեռ տասնը, մեծերների օգնելու համար:
7. Ունենց հանախ և հանդարդ ընկերություն է անում պարզեա կրտված «կատարանի տիպերի» հետ:
8. Ունենց հանախ և հանդարդ ընկերություն է անում պարզեա կրտված «կատարանի տիպերի» հետ:
9. Դասընկերներին «փոքր շրջապատի մարդիկ» չի համարում:
10. Դարդոց է զգալիս նրան պատճառ փախենալու պատճառով, կամ էլ պարզապես «հետաքրքիր ժամանակի» համար:

XII. ՅՍ -ՀՈԳԵԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԱՏԱՆԱՆ ՆՇԱՆՆԵՐ, ՍԵՌԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

1. Խիստ ետ է մնում ռասան մեջ:
2. Բարդանանալուց չի կարող կարդալ:
3. Հակադրական թերություններ տարբերան մաթեմատիկայից ունեցած գիտելիքներում:
4. Հատասրեկման հարաբերությունները և կապերը հասկանալու անկարողություն:
5. Մշտական օգնություն և հսկման կարիք:
6. Անհիսե ձիգեղ, ազդեցիկություն:
7. Երեխաները նրան վերաբերվում են որպես խենթուկի:
8. Չափից ավելի սրտատեսությունի «Հանկարան փախեր» ունի:
9. Շատ փնթի է, կամ ընդհակառակն՝ չափազանց մաքրասեր:
10. Խոսքային բարդարձակությունը իրեն չի տիրապետում:
11. Անձրդարան է, ձուլ: Հանախ մոռանում կամ կորցնում է իր մասիսները, գրքերը և այլն:
12. Մենակ աշխատել չի կարող:
13. Շատ վատ տեսական հասունացում, զգայունություն հանդասան սեռի նկատմամբ (սկսելով 12-13 տարեկան երեխաների համար):
14. Սեռական զարգացման հապարդում:
15. «Բեռարդ» և՝ զրվասանքի, և՝ պարտականքի նկատմամբ:

XIII. ՀԹ - ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ, ՄԱՐՄՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հանախակի գլուխանարդանանքներ:
2. Հանախակի գլուխանարդանանքներ թթից:
3. Շեղում է բերանով:
4. Ականչի նիստնարդությունների հակվածություն:
5. Մաշվածին հիվանդությունների հակվածություն:
6. Հանախակի գանգրանանում է տասմարդանքի ցանքերից և սրտիսանությանից:
7. Հանախակի գլխացավեր:
8. Գունատվելու կամ կարմրելու մեծ հակվածություն:
9. Փիլանդրոս, կարմրած կոպեր:
10. Շլության:
11. Վատ սեռարդություն:
12. Թույլ լսողություն:
13. Շատ կարճ հասակ:
14. Չափազանց գիրություն:
15. Տրեղ պատարդին մինանանանում դեմքը):



Խնդրում ենք ամենչ դրական պատասխանի դեպքում հատանարդանանի վանդակի մեջ դնել գումարման նշան՝ «+». Բացասական պատասխանի դեպքում վանդակը թողնել դատարկ: Խնդրում ենք այդ նշումներ չկատարել և լինել ուշադիր:

I	ԱՎ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14		6
II	ԴՊ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13			4
III	ԻՊ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	9
IV	ՏՇ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	1
V	ԹՇ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14		2
VI	ՏԵ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	0
VII	ԱՍ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				4
VIII	ԹԵ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	4
IX	ՀԼ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	9
																	39

X	ՆԱ	1	2	3	4	5	6	7	8	9						4
XI	ՇՊ	1	2	3	4	5	6	7	8	9	10					1
XII	ՅՍ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	4
XIII	ՀԹ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	2
																	50